

ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



**ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանությունը ցանկացած ապօրինի միջամտությունից, սեփականության և բնակարանի անձեռնմխելիությունը: Օրենքով պաշտպանվող բարիքների դեմ ուղղված ոտնձգությունից անհրաժեշտ պաշտպանությունը, հանդիսանալով անձի սահմանադրական իրավունքների իրացման եղանակներից մեկը, հավասարապես վերապահվում է ինչպես ՀՀ բոլոր քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Հանրության համար վտանգավոր ոտնձգություններից քաղաքացիների պաշտպանության իրավունքն ամրագրող իրավական նորմի առկայությունը քրեական օրենսդրությունում և վերջինիս ճիշտ կիրառումը խթանում են քաղաքացիների սոցիալապես ակտիվ վարքագիծը, հանդիսանում են կարևոր նախապայմաններ՝ պետության կողմից հանցավորության դեմ տարվող պայքարին բնակչությանը ներգրավելու և այն ավելի արդյունավետ դարձնելու համար, յուրաքանչյուր անհատին հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն կանխելու իրավախախտումները՝ աջակցելով իրավապահ մարմինների աշխատանքին: Օրենքով երաշխավորված իրավունքներն ու շահերը պաշտպանելիս քաղաքացիների ակտիվ վարքագծում պետության շահագրգռվածությունն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական օրենսգրքի նորմերում:

մի շարք կարևորագույն հարցեր, որոնք երբեմն խոչընդոտում էին նշված իրավական նորմի իմաստի միատեսակ ըմբռնմանն ու կիրառմանը: Անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված գործողություններին իրավակիրառող մարմինների կողմից հաճախակի տրվում էր տարբեր իրավաբանական գնահատական, որը պայմանավորված էր համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող իրավական կարգադրագրերի ոչ բավարար պարզությամբ և որոշակիությամբ: 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ է դրվել ՀՀ նոր քրեական օրենսգրքը, որը հանգեցրել է մի շարք ինստիտուտների քրեաիրավական կարգավորման արմատական փոփոխություններին: Գործող քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպումն էապես ավելի լայն է իր բովանդակությամբ՝ նախկինի համեմատ, և թեև գուրկ չէ որոշ թերություններից, սակայն, անշուշտ, վկայում է նշված ինստիտուտի զարգացման մասին. այն պարունակում է մի շարք դրույթներ, որոնք նախկինում որոշվում էին միայն քրեական իրավունքի տեսությունում և կոչված են որոշակիություն մտցնելու տվյալ ինստիտուտի կիրառման գործընթացում, բացառելու տարածայնությունները՝ այն մեկնաբանելիս, նպաստելու այդ ինստիտուտի միատեսակ կիրառմանը և որպես հետևանք՝ նվազագույնի հասցնելու դատական սխալների թիվը համապատասխան կատեգորիայի քրեական գործեր քննելիս:

Նախկինում գործող՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածում ամրագրված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անտեսվում էին հանրորեն վտանգավոր ոտնձգությանը և պաշտպանությանը վերաբերող

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակու-

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»։ Ի տարբերություն նախկին խմբագրության, գործող քրեական օրենսգրքը ճանաչել է ոչ միայն հանրորեն վտանգավոր ոտնձգությունից, այլև դրա իրական սպառնալիքից պաշտպանվելու իրավաչափությունը։ Թեև մինչ այդ տվյալ տեսակետը արտացոլված էր քրեական իրավունքի տեսությունում, սակայն դրա օրենսդրական ամրագրումն, անշուշտ, պետք է նպաստի անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունների ավելի արդյունավետ կարգավորմանը։ Գործող օրենսգրքում, ի տարբերություն նախկինի, օրենքով պաշտպանվող, թվարկվող բարիքներից առաջինը նշված են անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, այնուհետև՝ հասարակության և պետության շահերը, որը վկայում է պետական շահերի նկատմամբ անհատի իրավունքների և շահերի գերակայության սկզբունքի ճանաչման մասին և համապատասխանում է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի պահանջներին։ Իրավական կարգավորում է ստացել նաև ոտնձգություն կատարողին մահ պատճառելու, ինչպես նաև պաշտպանվելիս զենք և որպես զենք օգտագործվող այլ միջոցներ կիրառելու իրավաչափության խնդիրը, որը կարևոր նշանակություն ունի անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հարցը որոշելիս։ Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»։ Նույն հոդվածի 5-րդ կետով սահմանվում է. «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև սպորինաբար և բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից»։ Անհրաժեշտ պաշտպանության վիճակում ոտնձգողին կյանքից զրկելը

դատական պրակտիկայում հիմնականում դիտվել է որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում։ Նախկին քրեական օրենսգրքում կարգավորված չէր նաև պաշտպանվողի կողմից զենքի կիրառման հարցը, որն իրավակիրառողի կողմից նույնպես շատ հաճախ գնահատվում էր որպես սահմանազանցում։ Նշված դրույթների օրենսդրական ամրագրումն էապես նպաստում է իրավական կարգադրագրերի ճիշտ կիրառմանը՝ անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս։

Գործող քրեական օրենսգրքի նվաճումների թվին կարելի է դասել նաև 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը, որի ուժով՝ «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնական դիրքից»։ Սահմանելով վերոհիշյալ դրույթը՝ օրենսդիրը ելել է այն հանգամանքից, որ քրեական իրավունքի տեսությունում նշված հարցը լուծվում էր ոչ միանշանակ։ Իրավաբանական գրականությունում գերակշռող կարծիքը համահունչ էր վերը շարադրված տեսակետին։ Սակայն որոշ քրեագետների գիտական աշխատություններում արտահայտվում էր նաև հակառակ կարծիք, ըստ որի՝ անհրաժեշտ պաշտպանության իրավաչափությունը բացառվում է, եթե առկա է ոտնձգության խափանման նպատակով իշխանության ներկայացուցիչներին դիմելու կամ ոտնձգությունից խուսափելու հնարավորություն, որը չի օգտագործվում։ Տվյալ մոտեցումը զգալիորեն սահմանափակում էր պաշտպանվողի իրավունքները և այդ իսկ պատճառով չէր ընդունվում քրեագետների մեծամասնության կողմից։ Մինչդեռ, իրավական պրակտիկայում ոտնձգությունից խուսափելու կամ իրավապահ մարմինների օգնությանը դիմելու հնարավորության առկայության պայմաններում պաշտպանության գործադրման իրավաչափությունը երբեմն դրվում էր կասկածի տակ, քանի որ այդ խնդիրն օրենքով միանշանակ կարգավորված չէր։ Ներկայումս այն ստացել է օրենսդրական լուծում, որը բացառում է տարածայնությունները նշված հարցի շուրջ։

Միաժամանակ, առկա բացթողումների թվին կարելի է դասել այն, որ օրենքը չի պարունակում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«հանրության համար վտանգավոր ոտնձգություն» հասկացության բնորոշում. հատակեցված չեն ոտնձգության օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշները (մասնավորապես, ոտնձգության՝ գործողությամբ կամ անգործությամբ դրսևորվելը), թեև օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար ավելի նպատակահարմար կլինեի դրա օրենսդրական ամրագրումը: Օբյեկտիվ կողմից հասարակական արժեքների դեմ ուղղված ոտնձգությունը, որպես կանոն, դրսևորվում է գործողությամբ, սակայն հնարավոր է նաև անգործությամբ ոտնձգություն կատարել: Որոշ հեղինակներ ժխտում են անգործության դեմ պաշտպանություն գործադրելու հնարավորությունը՝ գտնելով, որ այն հնարավոր է միայն ակտիվ գործողությունների դեպքում¹: Սակայն տվյալ մոտեցումն անհիմն սահմանափակում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքի իրացման ոլորտը, քանի որ օրենքով պաշտպանվող բարիքների համար վտանգ կարող են ներկայացնել վարքագծի տարբեր ձևերը: Պրակտիկական ցույց է տալիս, որ հանրորեն վտանգավոր ոտնձգությունը կարող է կատարվել նաև անգործությամբ: Օրինակ՝ երկաթգծի աշխատակցի կողմից սլաքը դիտավորությամբ չփոխելը՝ զնացքի խորտակում առաջացնելու նպատակով, բժշկի կողմից հիվանդին դիտավորյալ չբուժելը կամ մոր կողմից նորածին երեխային չկերակրելը՝ մահ պատճառելու նպատակով և այլն, երբ հանրորեն վտանգավոր անգործությունը խափանվում է բռնություն գործադրելու միջոցով, որը նպատակ է հետապնդում անձին հարկադրել իր պարտականությունները կատարելուն: Վ.Ի. Տկաչենկոն առաջարկել է առանձնացնել հանցավոր անգործություն դրսևորող անձանց գործելուն հարկադրելը որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանք²: Կարծում ենք՝ այն ավելորդ է՝ հաշվի առնելով, որ նման դեպքերն ամբողջությամբ ընդգրկվում են անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կարգավորման ոլորտում:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը չի պարունակում նաև հանրության համար վտանգավոր ոտնձգության սուբյեկտիվ կողմի նկարագրություն. բացակայում է որևէ նշում ոտնձգությանը բնորոշ մեղքի ձևի վերաբերյալ, մինչդեռ տեսական գրականությունում մոտեցումը տվյալ հարցին միանշանակ չէ: Քրեական իրավունքի տեսությունում վեճերի տեղիք են տալիս այն դեպքերը, երբ անձի

անզույշ արարքի հետևանքով առաջացած վտանգը վերացվում է՝ դրա աղբյուր հանդիսացող անձին վնաս պատճառելու միջոցով: Իրավաբանական գրականությունում գերակշռող կարծիքն այն է, որ «անզույշությամբ ոտնձգելու» հնարավորությունը բացառվում է, քանի որ անզույշությամբ կատարված արարքը չի կարող դիտվել որպես ոտնձգություն. տվյալ իրադրությունում առկա է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ: Այլ հեղինակներ գտնում են, որ այդպիսի իրադրություններն ընդգրկվում են անհրաժեշտ պաշտպանության հասկացության մեջ: Այսպես՝ Յու.Վ. Բաուլինը նշել է, որ մեղքի առկայությունը չի հանդիսանում հանրորեն վտանգավոր ոտնձգության պարտադիր հատկանիշ և հետևաբար՝ անհրաժեշտ պաշտպանության հիմք, քանի որ բացի հանցագործություններից, այդպիսին կարող է լինել և՛ անմեղսունակ անձի կողմից կատարվող ոտնձգությունը, որի դեպքում մեղքի մասին խոսք լինել չի կարող, և՛ փաստական սխալի պայմաններում գործող անձի՝ վնաս պատճառող հանրորեն վտանգավոր արարքը, և այլն³: Ավելի հիմնավոր է թվում քրեական իրավունքի տեսությունում գերիշխող տեսակետը. ընդունված է համարել, որ ոտնձգությունը ենթադրում է դիտավորություն: Սակայն դա ևս վիճելի է, հետևաբար գտնում ենք, որ ոտնձգության սուբյեկտիվ կողմի բնորոշման խնդիրը պահանջում է միանշանակ օրենսդրական լուծում:

Իրավաբանական գրականությունում տարբեր է մոտեցումը պաշտոնատար անձանց գործողություններից անհրաժեշտ պաշտպանության թույլատրելիության հարցի նկատմամբ: Միանշանակ, այն անթույլատրելի է պաշտոնատար անձանց իրավաչափ գործողությունների կամ անգործության դեմ՝ նույնիսկ այն դեպքերում, եթե դրանք ուղղված են կամ կարող են հանգեցնել այլ անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակմանը (օրինակ՝ օրենքով սահմանված կարգով իրականացվող ձերբակալման, կալանավորման, ազատագրկման դատավճիռն ի կատար ածելու և այլ դեպքերում): Սակայն այն թույլատրելի է պաշտոնատար անձանց հանցավոր գործողություններին հակազդելիս: Մինչդեռ, իրավագետների մոտեցումը պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների դեմ գործադրվող պաշտպանության իրավաչափության հարցին տարբերվում է: Որոշ հեղինակների կարծիքով՝ նման հանգամանքներ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րում պաշտպանությունը հնարավոր է միայն լրացուցիչ պայմանների առկայության դեպքում: Այսպես, Վ.Ֆ. Կիրիչենկոն գտնում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը հնարավոր է միայն պաշտոնատար անձանց այնպիսի գործողությունների կապակցությամբ, որոնք հակաօրինական են և՛ նյութական, և՛ ձևական առումներով: Ինչ վերաբերում է այն արարքներին, որոնք անհրավաչափ են ըստ էության, սակայն կատարվում են օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան (օրինակ՝ անմեղ անձը ձերբակալվում է դատավարական նորմերի պահանջների պահպանմամբ), ապա նման դեպքերում անհրաժեշտ պաշտպանության դիմելն արդարացված չէ՝ նկատի ունենալով, որ տվյալ պարագաներում առկա են անձի իրավունքների պաշտպանության այլ եղանակներ (օրինակ՝ պաշտոնատար անձի գործողությունների բողոքարկումը)⁴: Այլ քրեագետների կարծիքով՝ անհիմն է պաշտոնատար անձանց գործողությունների ձևի և բովանդակության սահմանազատումը, քանի որ իր բովանդակությամբ հանրորեն վտանգավոր, հակաօրինական արարքը չի կարող համարվել ձևականորեն օրինական և հակառակը: Ն.Գ. Դուրմանովը իրավաչափ է համարում իշխանության ներկայացուցիչների և այլ պաշտոնատար անձանց ակնհայտ հանցավոր գործողություններից անհրաժեշտ պաշտպանության իրավունքը՝ անկախ նշված գործողությունների ձևից և ոտնձգության սուբյեկտից⁵:

Կարծում ենք՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքի սահմանափակումները, կապված ոտնձգության իրագործման ձևի և դրա սուբյեկտի հետ, չեն բխում օրենքի պահանջներից, քանի որ այդպիսիք նախատեսված չեն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտն ամրագրող նորմերով: Հետևաբար, ոտնձգության սուբյեկտ կարող է լինել ցանկացած անձ՝ անկախ հանցագործության սուբյեկտին բնութագրող՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած լինելուց և մեղսունակության հատկանիշների առկայությունից, ինչպես նաև անկախ զբաղեցրած պաշտոնից: Բոլոր դեպքերում, կարծում ենք, որ տարածայնությունները բացառելու նպատակով ավելորդ չէր լինի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անդրադառնալ ոտնձգության սուբյեկտին բնութագրող հատկանիշներին:

Օրենսդրի կողմից անտեսվել է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին առնչվող այնպիսի երևույթ, ինչպիսին է կարծեցյալ պաշտպանությունը, որն իրենից ներկայացնում է երևակայական, օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունեցող ոտնձգությունից պաշտպանություն: Կարծեցյալ պաշտպանության վիճակում պաշտպանական գործողությունների դիմած անձին թվում է, որ կատարվում է ոտնձգություն, որն իրականում բացակայում է: Որպես կանոն, կարծեցյալ պաշտպանության դեպքում պաշտպանվողը մոլորության մեջ է գտնվում երևակայական ոտնձգողի գործողությունների բնույթի վերաբերյալ, որոնք նա սխալմամբ գնահատում է որպես հանրության համար վտանգավոր, կամ էլ «ոտնձգողի» անձի վերաբերյալ, երբ իրական ոտնձգության պարագաներում վնաս է պատճառվում դրա հետ առնչություն չունեցող երրորդ անձին, որին պաշտպանվողը սխալմամբ շփոթում է իրական ոտնձգողի հետ: Կարծեցյալ պաշտպանության իրավիճակում պաշտպանվողը գործում է փաստական սխալի ազդեցության տակ, հետևաբար՝ վնաս պատճառելու համար նրա պատասխանատվության հարցը լուծվում է փաստական սխալի կանոններով: Կարծեցյալ պաշտպանության խնդրին անդրադարձել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը՝ 1984 թվականի օգոստոսի 16-ին ընդունված «Դատարանների կողմից հանրորեն վտանգավոր ոտնձգություններից անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ապահովող օրենսդրության կիրառման մասին» որոշման 13-րդ կետում պարզաբանելով, որ դատարանները պետք է տարբերեն անհրաժեշտ պաշտպանության և այսպես կոչված կարծեցյալ պաշտպանության վիճակը, երբ բացակայում է իրական հանրորեն վտանգավոր ոտնձգությունը և անձը միայն սխալմամբ ենթադրում է այդպիսի ոտնձգության առկայությունը: Այն դեպքերում, երբ դեպքի իրադրությունը հիմք էր տալիս ենթադրելու, որ կատարվում է իրական ոտնձգություն, և պաշտպանության միջոցներ գործադրած անձը չէր գիտակցում և չէր կարող գիտակցել իր ենթադրության սխալ լինելը, նրա գործողությունները պետք է դիտել որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված: Մինչդեռ, եթե անձը վնաս է պատճառում՝ չգիտակցելով ոտնձգության կարծեցյալ լինելը, սակայն ըստ գործի հանգամանքների պարտավոր էր և կարող էր դա գիտակցել, ապա այդ անձի գործողու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունները ենթակա են որակման անգոյնությանը վնաս պատճառելու համար պատասխանատվություն նախատեսող քրեական օրենսգրքի հոդվածներով⁶: Միաժամանակ, եթե կարծեցյալ պաշտպանության վիճակում պաշտպանվողի կողմից դիտարկյալ կատարվում են այնպիսի գործողություններ, որոնք, նրա համար ակնհայտ, չեն համապատասխանում երևակայական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը, ապա արարքը պետք է դիտվի որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված: Հնարավոր են նաև դեպքեր, երբ պաշտպանվողին բոլորովին անհիմն թվում է, որ կատարվում է ոտնձգություն, թեև ստեղծված իրադրությունն ընդհանրապես հիմքեր չի տալիս մնան ենթադրություն անելու: Տվյալ պարագաներում վնաս պատճառելու համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: ՀՀ քրեական օրենսգրքը չի պարունակում կարծեցյալ պաշտպանությանը վերաբերող դրույթներ, որը կարելի է դիտել որպես օրենսդրի բացթողում: Գտնում ենք, որ անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունների առավել արդյունավետ կարգավորման համար նպատակահարմար կլինեն օրենքում ամրագրել կարծեցյալ պաշտպանության բնորոշումը և դրա իրավական հետևանքները սահմանող նորմերը:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի թերություններին կարելի է դասել ուսումնասիրվող ինստիտուտն ամրագրող 42-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության անհամապատասխանությունը նույն օրենսգրքի ընդհանուր մասի որոշ նորմերին: Այսպես, 2004 թվականի հուլիսի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է փոփոխություն. լրացվել է երկրորդ պարբերությունը, ըստ որի՝ «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով»: Քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսվում է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ երկու արարք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն (108-րդ հոդված) և առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս հասցնելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (116-րդ հոդված): Հետևաբար, բացի վերը նշված

դեպքերից, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ ոտնձգողին ցանկացած այլ վնաս հասցնելը հանցանք չի դիտվում:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները սահմանող օրենսգրքի 62-րդ հոդվածով անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը նախատեսվում է որպես մեղմացուցիչ հանգամանք (62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ): Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ «Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»: Տվյալ պարագաներում՝ նույն իրավական ակտում իրարամերժ նորմերի առկայության պայմաններում, անհասկանալի է, թե ո՞ր դեպքերում պետք է կիրառվի օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը: Առաջանում է տրամաբանական հարց, թե ե՞րբ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցանք կատարելը կարող է դիտվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Այսպես, օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չլինելու դեպքում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված արարքն ընդհանրապես հանցանք չի համարվում, իսկ հակառակ դեպքում այն նույնպես դուրս է մնում 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կարգավորման ոլորտից, քանի որ մնան դեպքերում օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմերն արդեն իսկ նախատեսում են անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը որպես արարքի օբյեկտիվ կողմը բնութագրող պարտադիր հատկանիշ (մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 108 և 116 հոդվածները): Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ, ինչպես նաև 62-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթների միաժամանակյա առկայության պարագաներում անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, գործակալում չի կարող կիրառվել, ուստի օրենսգրքի 62-

www.moj.am

րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող հանգամանքների թվում այն ընդգրկելն ավելորդ է և անտրամաբանական (նույնը վերաբերում է նաև հանցանք կատարած անձին բռնելու իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելու հանգամանքին):

Վերը շարադրված վերլուծության հիման վրա կարելի է առաջարկել հետևյալը.

1. Օրենքում սահմանել «հանրության համար վտանգավոր ոտնձգություն» հասկացության բնորոշումը, որը պետք է ընդգրկի ոտնձգության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմը բնութագրող հետևյալ հատկանիշները՝ ա) ոտնձգության՝ օբյեկտիվորեն և՛ գործողությամբ, և՛ անգործությամբ դրսևորվելը, բ) ոտնձգությանը բնորոշ մեղքի ձևը,

2. Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անդրադառնալ ոտնձգության սուբյեկտին բնութագրող հատկանիշներին,

3. Օրենսդրական լուծում տալ կարծեցյալ

պաշտպանության խնդրին՝ սահմանելով դրա հասկացությունը և իրավական հետևանքները,

4. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում կատարել փոփոխություն՝ թվարկվող հանգամանքներից հանելով անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը:

Հասարակական առաջընթացով պայմանավորված պահանջները բավարարող, հնարավորինս հստակ ձևակերպված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ամրագրումը կարևոր նշանակություն ունի մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, հասարակության և պետության շահերի լիակատար իրացման և պաշտպանության իրական երաշխիքների ապահովման համար, նպաստում է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը և հետևաբար՝ օրինականության և իրավակարգի ամրապնդմանը:

¹ Տե՛ս Կիրիչենկո Վ. Փ. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве. Л., 1948. С. 26-27.

Баулин Ю. В. Обстоятельства, исключющие преступность деяния. Харьков, 1991. С. 232-233.

² Տե՛ս Կաչենկո Վ. Ի. Необходимая оборона по уголовному праву. Л., 1979. С. 11.

³ Տե՛ս Կաուլին Ե. Վ. Обстоятельства, исключющие преступность деяния. Харьков, 1991. С. 234-235.

⁴ Տե՛ս Կիրիչենկո Վ. Փ. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве. Л., 1948. С. 97.

⁵ Տե՛ս Դурմանով Ն. Դ. Обстоятельства, исключющие общественную опасность и противоправность деяния. Советское уголовное право. Часть общая. М., 1961. С. 13.

⁶ Տե՛ս Բյուլլետենը Վերջինիս Սուդա ՎՍՍՏ, 1984. N 5. С. 12.

⁷ Տե՛ս Գրիգորյան Մ.Վ. Право на необходимую оборону. Ереван. Изд-во «Раздан», 2002.

⁸ Տե՛ս Վարձանյան Լ.Գ. Уголовная ответственность за убийство при превышении пределов необходимой обороны: теория и практика правового регулирования. Автореферат дисс. канд. юрид. наук. Ереван, 2008.

⁹ Տե՛ս Սոնով Ա.Ն. Обстоятельства, исключющие преступность деяния. СПб., 1998.